ՀՈԴՎԱԾՆԵՐ

Վ.ՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ
(ծննդյան 100-ամյակի առթիվ)

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆ

«Եթե դուք դիտեք մեր վերջին տարիների կյանքը, չեք կարող չնկատել, որ այնտեղ կատարվել է և մասամբ կատարվում է մի խոր հեղաշրջում։ Ձեմ ուզում այժմ համեմատել մեր ներկայի կյանքը մի երկու տասնյակ տարով մեզնից բաժանված կյանքի հետ։ Համեմատեցեք մեր այժմյան կյանքը նախահեղափոխական կյանքի հետ, ներկա դարու սկզբի տարիների կյանքի հետ և դուք կտեսնեք, թե որքան հեռու են նրանք իրարից, որքան տարբեր, որքան միմյանց ժխտող[1]*,—այսպես Տերյանն ընկալեց 1905 թվականը, որ Վ. Ի. Լենինի բնորոշմամբ նշանավորում է մի «ամբողջ դարաշրջանի վախճանը»։ Սակայն «կատարվող տնտեսական-քաղաքական և կուլտուրական հեղաշրջումը» Տերյանի համոզմամբ վերահաս ու գալիք վերափոխությունների «նախերգանքն է միայն», որ գուշակում է ազգերի ու մարդկության բանական վերածնունդը։ Բուն տեղաշարժերը սրում են Տերյանի ուշադրությունը իր շուրջը կատարվող իրադարձությունների հանդեպ, նրա հետաքրքրությունները մղելով հասարակական գիտությունների ոլորտը։ Ուսումնասիրում է քաղաքատնտեսություն և պատմական մատերիալիզմ, փորձում կռահել հասարակական զարգացման օրինաչափությունները, ձգտելով զգացմունքի սոցիոլոգիայի «ռոմանտիկական խոյանքն» ու «մեշչանական խոհականությունը» հաղթահարել երևույթների գիտական իմացությամբ, ուր ստուգվում է «գեղեցկության անհրաժեշտորեն բանական լինելը»։ Սոցիոմի գիտական ճանաչումը որոշակի խմորումներ է առաջ բերում նրա պոետական զգացողություններում, նրա հոգեկան բռնկումները տոգորելով քաղաքացիական մոտիվների արձագանքով։ Իր «արյունոտված սիրտը» նա պարզում է արդարության ձայնին՝ «Որպես մի նոր խաչ Մի նոր Գողգոթա», իր «կիզված խոհերը» նվիրաբերելով նրանց, ովքեր տվայտում են խուլ խրճիթներում ու «ցուրտ նկուղներում», ովքեր բախտ են որոնում «ալեկոծ շուկաներում» կամ տառապում են «շիրիմամութ հանքերում»։ Խորին կարեկցությամբ համակված դեպի «կյանքի որբերը», Տերյանը գթության աղերսներ է հղում «բախտից հալածվածներին»՝ «Եկեք իմ գիրկը գուրգուրեմ ես ձեզ, Մենակ ոգիներ...», և միաժամանակ նրանց արտերում բորբոքում «հատուցման տենդը»։ Մոայլ քաղաքի ժխորում «համաչափ զարկով» աղմկում են «պողպատե դևերը», իսկ կոշտ երկաթների «դժկամ լեզուն» հոհոում է մի «դժնդակ երգ»։ Ջնդանների ու բուրգերի անողոք շարությունից «մեռնում են երդ ու սեր», բայց «զարթնում է ահավոր մի ցասում», որ զալատյան զանգերի պես ավետում է հատուցման ժամը, քանզի նկուղներում ու ներքնահարկերում ձևավորվում է «մի ահեղ ցիկլոն», իսկ օրգիաների ու խնջույքների «լպիրշ քառսում» վրեժի դաշույնն է սրում մի «ալ-ուրվական»։ Սիրո երգի, անրջանքի, վայելքի ու հուզման ներանձնական փնքնաբավ զգացումները տեղի են տալիս արդարության, ազատության և իրավունքի բարոյական նվիրումին ու բանաստեղծը վանելով իրենից «համորեն լացող» աշնան նվագները, արտասանում է «կովի առաջին հնչյունը»։*

Այսպես հայտնվեց հեղափոխության ուրվականը Տերյանի առաջ։ Եվ սակայն ժամանակների անջատումը անցյալի ու ներկայի միջև խոր ճեղք առաջ

---

[1] Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1961, էջ 277։

բերեց բանաստեղծի հոգեկան աշխարհում և նա շվար մնաց ապագայի անորոշության առեղծվածի հանդեպ։ «Անցյալն ինձ համար մեռավ։ Ես ողջունում եմ ապագան, բայց չգիտեմ, թե ինչպիսին կլինի այն». «Ինձ սարսափեցնում են ապագայի հեռանկարներն ու հեռուները», դրում է Տերյանը 1907 թվականի նամակներում, կարծես նախազգալով այն դեգերումները, որ պիտի վիճակվեր հայ դեմոկրատ մտավորականությանը դեռ երեկ փայփայած, սակայն սոցիալական-ազատագրական հեղաբեկումների համաշխարհային-պատմական հեռանկարների մեջ դիմազրկվող իդեալի՝ ազգային ռոմանտիզմի և «ազգային հեղափոխության» պատրանքների փլուզումից։ Հումանիտար-ուտոպիական ուսմունքներից ձուլված և բարոյական ներհայեցողությամբ ըմբռնված նրա սոցիալիզմը պիտի զգաստ պահեր անկումայնության ու դիմադարձության ախտից, սակայն անկարող էր կանխելու նրա հոգեկան ճգնաժամը մարդկային արժեքները ոչնչացնող իռացիոնալ իրականության հանդեպ։ Տեղի է ունենում անջատումը, անցյալը հառնում է որպես գեղեցիկ հուշ և կորսված երազները բանաստեղծի խոհերը տանում են դեպի հեռավոր ու անհայտ եզերքներ.

Ես անջատված եմ հայրենի ճողից,
Հայրենի տուները իմ սրտին օտար,
Ինձ այրում է միշտ մի անհագ թախիծ,—
Հավիտյան դյութող անհայտ հանապարհ։

Հրաժեշտի մորմոքներում խզվում է եղելությունների շղթան և բանաստեղծը փորձում է հուշերի մեջ ներհյուսել ընդհատված պատմության բեկորները, բայց գիշերների թանձրությամբ մթագնվում են հուշերը և միայնության թախիծը արձագանքում է «հիացումի մի շշուկ», որ պատմում է՝ «Երազներս, երազներս, որ անցան»։

Հրաժեշտ— անջատում— մենակություն— կարոտ՝ հոգու կեցության այս վիճակներից է Տերյանը հյուսել «Մթնշաղի անուրջներ» (1908) բանաստեղծական շարքի գեղագիտական-փիլիսոփայական կոնցեպցիան։ Մենախոսությունների շղթան կապակցում է տառապանքների, երազների, կորսված հուշերի սիմֆոնիան և հոգու նվագներն արձագանքում են անանց թախիծով և «հոգեմաշ հուսահատությամբ» ծանրացած «այս տխուր երկրի» ռեքվիեմը։ Տիեզերական այս թախիծը բեկվում է բանաստեղծի հոգում, նրա ներաշխարհը ալեկոծում տառապանքի ու անկման հիվանդագին տագնապներով՝ «Իմ մեջ սառել է հիվանդ մի կարոտ, Եվ չըգտնելու տանջանքը մաշող»։ Դրսում աշնան տրտմությունն է թանձրանում, մշուշոտ իրիկունները մահացող բնության թախիծն են լալիս, ամպոտ երկինքը մեռնող լույսերի մարումն է ստում՝ երջանկության հույսերը թաղելով անջատման ցավի մեջ և ամեն ինչ դառնում է ունայն, անիմաստ ու անկապակից։ Անտարբեր աշխարհն ստիպանք չունի, սիրտը խամրում է միայնության ցուրտ անձավներում, իսկ խորհրդավոր լռությունն այլ բան չի հուշում, քան հիվանդ հոգու դառնաղետ մրմունջը։ Եվ երբ վերջին հույսերն են մարում, մենակությունն արձագանքում է հեռացումի և մոռացումի վհատ թախանձանքը.

Ոչ տրտունջ, ոչ մրմունջ ազավոր,
Հեռացիր, մոռացիր ինձ ճավետ.
Իմ ուղին միշտ մթին, մենավոր,
Կրգնամ իմ դժկամ ցավի հետ։

Բանաստեղծի հոգին պաշարված է «ինչ-որ անուրախ անհանգստությամբ», միստիկ մի նախազգացում վանում էր նրան «անցած լույսերից», քանի որ տանջող է «հիվանդ հոգու տառապանքը», փսկ երազների արշալույսը՝ առհավետ փակված՝ «Իմ հոգու համար չկա արշալույս— Անձրև է, աշուն»։ Բայց հուշերի մեջ վերստին հառնում է երջանկության հովտի դյութական տեսիլքը, ուր «քնքույշ լույս կար», «չմեռնող մի կյանք» և խաղաղությունն էր հավերժանում բնության կախարդական հեքիաթում.

Աստղյոք ճիշտ՞ում ես. երկիրը պայծառ
Ժպտում էր սիրով ճավիտենական.
Դարուն էր երգում ձայնով դյուրական
Աստղյոք ճիշտ՞ում ես. առու էր, անտառ...

Երբ հուշերը ցավ են արձագանքում և «հիվանդ սիրտը» սուզվում է «մոռացումի անձավում», արդեն երանելի է թվում մթնշաղը, ուր ամեն ինչ ձուլվում է «կապույտ մութի աշխարհում», իսկ անեղը ու խորհրդավոր կյանքը դառնում է «մի անսահման քաղցր նինջ»։ Սկիզբ է առնում անկումը և Տերյանի ներաշխարհում լսելի են դառնում չարագուշակ նախազգացումներ՝ «Կանգնած եմ մռայլ վիհի եզերքին», «Գագաթներից ես ցած իջա Անդունդները սիրտ մաշող», «Անուրջներս երկնածին գնացին, գնացին...»։ Թվում է, թե պետք է տեղի ունենար նեղքին հաշտեցումը, սակայն հոգու տեղատվությունը վերստին ճեղքվում է կարոտների քաղցրությամբ, սիրտն արթնանում է զգացմունքի տրոփից և խաղաղ գիշերների միայնությունը ցողում սիրո անփոխարինելի գգվանքով։ Թող որ մաշող լինի անջատման ցավը, թող որ ցուրտ ու անարև օրերում ծաղիկները դալկանան, բայց կա սերը, կա «հրաշք աղջիկը», որ «անակնկալ բախտի նման» վառում է հոգու լույսերը և «մոռացության մի ակնթարթի» մեջ ընդգրկում կյանքի հավերժության հեքիաթը.

Խաղաղ գիշերով դու կգաս ինձ մոտ,
Փնտուշ ձեռներդ ես կբռնամբուրեմ,
Կրցրեմ կյանքի հուշերը ցավոտ
Ու հեքիաթային լույսեր կվառեմ...

. . . . . .

Պայծառ աշխարհում կլինենք մենակ,
Ցավ կյանքի մեռոդ լույսերից խաբված,
Կերազենք անհուշ, անվերջ ու անհագ,—
Հեքիաթ աշխարհում առնավետ կապված...

«Մթնշաղի անուրջները» մարդկային կենսազգացողությունների բանաստեղծական արձագանքների մի անկրկնելի մատյան է, հուզերի անչափելի խորությամբ, խոհերի փիլիսոփայական հագեցվածությամբ և հոգեկան ռեալությունների միանգամայն կենսագրական բաղադրումներով։ Աշխարհն այդ արձագանքներում գծագրվում է մշուշապատ ստվերների ձևով, ամեն ինչ ընկղմվում է մթնշաղի մեջ և կյանքը դառնում է անուրջ։ Շողերը մեռնում են սարի ետևում, դաշտերը ձուլվում են կապույտ մեգի հետ, և տխուր երեկոն իր վրանն է զարկում աշխարհի վրա։ Ամեն ինչ տանում է խորհրդավոր կերպարանք, սիրտը լցվում է սև տագնապներով և կարոտի կանչերը խլանում են հեռավոր աստղերի անհաս երկնքում։ Աշունը, քամին, անձրևը ցրտությամբ են պատում աշխարհը, մահվան տագնապ է զգում սիրտը և խռված հոգին ձգտում է դեպի անեղերքի ու անվախճանի լուսե հովիտը.

Հեռու երկրի լուսե հովտում
Օրերն ուրիշ երգ են հյուսում,
Կյանքից հոգնած սիրտս տրտում
Այն երկիրն է միշտ երազում։

Սակայն մինչև հեռու երկրի լուսե հովիտը մի անանցանելի անդունդ է բաժանում, ուր Տերյանին պիտի վիճակվեր մեղքերի ու զղջման տառապանքի քավարանը։ Կար ժամանակ, որ հուշերը ռոմանտիկական անցյալում գեթ օրորվում էին հոգու արժեքների ձգող կարոտով, սակայն այժմ արդեն մարել են «հուշերի երկրի» ձայները, վրա են հասել «տանջանքի գիշերները», «մենության և անհուսության մթին վիհերի» հուշերն ու երազները դարձել «ննենգալի շար և այլանդակ», սերը դավաճանել մերժումի քամահրանքով՝ «Ինձ չես սիրում, ուրիշին, Ուրիշին ես սիրում դու», աղավաղել հայրենական տան հեռա-

պատկերը՝ «Ավերված երազ— Հայրենական տուն» և դարձի հույսերը թաղել հավիտենական անեծքով, քանզի մեռած հոգում «Անդարձություն է հիմա,— Ջրկա դարձի արահետ»։ Անդարձության հոգեբանական այս տեղումներն է պոետականացնում Տերյանը «Գիշեր և հուշեր» շարքում։

Մինորային տրամադրությունների մելանխոլիկ նվագներում տվայտում է նուրբ ու զգայուն հոգու ցավը, որ որոնում է լույսը, բայց չի գտնում, ձգտում է սիրել, բայց չի կարողանում, քանզի «Տանջանքի գիշեր (է)— և չրկա եզերք», «Գիշեր է և լռություն», «Անանց խավար է արդեն» և շարագուշակ ու ահասարսուռ այս հավիտենական մղձավանջում քամին երգում է հուսահատության չալկան մեղեդին.

Եվ անպատմելի ցավով է լցված
Այդ երգը անանց հուսահատության.—
Մրին գիշերում իմ սիրտը խոցված,
Լացը հուսաբեկ ավերված իմ տան...

Երգում է քամին, լալիս է նորից,
Անհույս ու անվերջ մղկտում է նա.—
Այս մութ գիշերում այնքան կա թախիծ,
Այնքան տրտունջ ու զանգատ կա հիմա...

Խոր իմաստ է հայտնաբերում թախծի էսթետիզացիան Տերյանի պոեզիայում։ Հոգու կեցության այդ նախաստեղծ վիճակը կարծես դառնում է աշխարհի իմացության մի յուրօրինակ ձև, ինքնագիտակցման ու ինքնավերլուծման փիլիսոփայական մեկնակետ։ «Եվ թախիծը,— գրում է Տերյանը 1907 թ. մի նամակում,— Հենց որ իջնում է ուշ աղջամուղջը, գյուղը լռում է, իջնում է իրոք գերեզմանային լռություն, որը երբեմնակի խախտվում է շների հաչոցով։ Թվում է թե գերեզմանատանն ես ապրում։ Ահա հենց այդ ժամանակ է, որ անտանելի ծանր է լինում և հոգիդ պարուրում է ճմլող, կուրծքդ ցավելու աստիճան սեղմող թախիծը։ Եվ թվում է գիշերը վերջ չունի... Թախիծ։ Անդրշիրիմյան լռություն։ Անվախճան գիշեր։ Ինձ թվում է, թե դարեր եմ ապրել»[2]։ Տերյանը որոշակի էր տեսնում այն, ինչ կատարվում էր դրսում, թե «անհաստատ», «անուշի» օրերի տաղտուկը ինչպիսի ավերածություններ էր կատարում հասարակական մտայնության շերտերում՝ տարածելով հուսալքություն և «ապատիա»՝ դարի այդ «սարսափելի հիվանդությունը»։ Այստեղ էլ իռացիոնալ իրականությանը հակադրելով ներարժեք անհատի հոգեկան ինքնաբավ բռնկումները, նա փիլիսոփայական իմաստ տվեց թախծին, կենսաբանական էմպիրիկ ու անպատճառ զգացողությունների մեջ հայտնաբերելով կեցության մի ուրույն էրանելի վիճակ։ «Ես փախչում էի առանձնությունից ու մենությունից,— գրում է Տերյանը,— որոնք այնպես սիրում եմ տրտմության բոպեներին։ Դա սարսափելի թախիծ էր։ Դուք հասկանո՞ւմ եք ինչ բան է թախիծը։ Պատճառազուրկ, անել, խոր, ծանր թախիծը։ Դուք հասկանո՞ւմ եք։ Դա գրեթե ֆիզիկական ցավ է պատճառում։ Ամենուր նա է, հասկանո՞ւմ եք, նա ամենուր է՝ իմ մեջ, իմ շուրջը, իմ վերև, ամենուր»[3]։ Այսպես հայտնվում է հոգու նիրվանան, ուր մենությունն արդեն սարսափելի չէ, քանի որ «ուրախալի թախծի կամ թախծոտ ուրախության» համակումները միաձուլվում են «տիեզերական ներդաշնակության հետ»։ Տեղի է ունենում նյութի անէացումը, ֆիզիկական եսը կորցնում է ժամանակի ու տարածության հետագիծը («... ինձ թվում է... որ արդեն իրականության մեջ ինձնից մնում է միայն ինչ-որ մեխանիկական բան, այսինքն՝ ես չեմ լինում...), հայտնվում է մահը, արդեն ոչ իբրև անդարձ վերջավորություն, այլ որպես ճանաչման սկիզբ, բացարձակի ու հավերժականի

2 Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1963, էջ 178։
3 Վ. Տերյան, Նամակներ, Երևան, 1971, էջ 70։

փոխաձևություն, վերին միացնող ոգու իմաստություն՝ «Միայն մահն ու սերը կարող են կապել մարդկանց, մնացյալ ամեն ինչը տարբերում, բաժանում է...»[4]։ *Անսահմանի, հեռավորի այս եզերքներում արդեն նշմարվում է «լուսեղեն մի երկիր», ուր կյանքը հրաշք է և առասպել.*

Ես գիտեմ լուսեղեն մի երկիր,
Ես գիտեմ դյուրական մի ճովիտ,
Ուր ճոգին թափում է վշտակիր
Իր բևեռն ու հագնում է ժըպիտ։

Ես գիտեմ մի թռվիչ առասպել,
Ուր ողջ կյանքը հրաշք է դառնում.
—Քո անուշ անունով միշտ արբել,
Եվ երգով, որ բնավ չի մեռնում...

Լուսեղեն այս երկրի հայտնությունն է, որ Տերյանը կատարեց «Ոսկի հեքիաթ» շարքում։ Հայտնության երկիրը խորհրդավոր է ու անեզերք։ Անամպ երկնքի արևոտ հեռուներում աղոտանում են անցյալի ստվերները։ Մոռացության տալով խավար գիշերների տանջող հուշերը։ «Անհուն երկնքի կապույտ աշխարհում» աստղերը կարոտի երգեր են հյուսում և սրտերն են ջերմանում հանդիպումի ըղձանքով։ Չկա հոգին կաշկանդող ոչ մի կապանք, աշխարհը ջինջ է և գույները պայծառ ու ժպտացող։ Միանում են ընդհատված պատմության թելերը և բանաստեղծը գտնում է իր կորցրած արժեքները.

Բացված է արդեն ուրիշ մի երկիր,
Ես այստեղ եմ, բայց ուրիշ եմ հիմա,—
Ոսկի հայացքով կախարդել է նա,
Այլ սիրով լցրել ճոգիս վշտակիր...

«Ոսկի հեքիաթի» լուսեղեն երկիրը սիմվոլիստ— թեուրգի (Բլոկի արտահայտությունն է) ստեղծած հակաաշխարհն է, ուր բանաստեղծը փոխադրում է իր երկվորյակին, որը և «թռվիչ առանձնատան» մեջ իր կյանքը դարձնում է արվեստ, շրջապատում իրեն հովանավոր միֆերով և հյուսում իր գոյության առասպելը։

Դանթեական մի սիստեմ կա Տերյանի բանաստեղծական շարքերի կառուցվածքում։ Մենության խավար զնդանը յուրօրինակ բանտ է, ուր անհատը տվայտում է անջատման ցավից, ապա մաքրում իր էությունը գիշեր-հուշերի «տանջանքի քավարանում» (Էդ. Թոփչյան) և ի վերջո ապաստան գտնում տիեզերական ներդաշնակության «ոսկի հեքիաթում»։ Պոետական սիստեմի ալեգորիան գծում է տառապանքի ու փրկության ուղին՝ Անդարձությունից դեպի Վերադարձ։ Ինքը Տերյանը միանգամայն որոշակիորեն գիտակցել ու վերլուծել է տատանումների այն սահմանը, ուր հատվում են էմպիրիկն ու փիլիսոփայականը բանաստեղծական իր տրամադրությունների հոսքում։ «Անտարբերությունն ինձ համար անհասկանալի է, քանի որ ես կենդանի եմ»[5], *ասում է Տերյանը, միանգամայն հստակ դիտելով անհատական կամքի ինքնագիտակցման արժեքը՝ հաղթահարելու բնավորությամբ արդարացվող («հիմա ամեն ինչ բարդում են «բնավորության» վրա») ինտելիգենտական «ծուլությունն ու թուլությունը»։ «Ամենքի շուրթերին, աչքերում, քայլվածքի մեջ, ամեն, ամեն ինչում այդ բառն է՝ ապատիա...», ասում է Տերյանը, օբյեկտիվ պատճառներից դուրս կշտամբելով ուտիլիտար-սպառողական հոգեբանության սուբյեկտիվ ծծվածքը, որը չի ուզում նշմարել «ուղին», այլ՝ «տեսնել սոսկ նվաճումը»։ «Ամբողջ կյանքում անրջելը ճղճիմ բան է, բայց թախծի ու տրտմության պահին առանձնանալ և մենության հովանու ներքո լալ ու անրջել՝ դա հոգու պա-*

---

4 Նույն տեղում, էջ 213։

5 Նույն տեղում, էջ 206։

հանջ է, նույնքան անհրաժեշտ, որքան սնունդը։ Մենության անապատից վերադառնալ մարդկանց մեջ նորոգված ու լուսավոր, սերը սրտում և կյանքի, աշխատանքի ծարավով»[6]։ Այսպես էլ Տերյանը կատարում է հոգևոր կենսագրության իր շրջանը բանաստեղծական շարքերի տրամաբանական (բայց ոչ ժամանակային-պատմական) շղթայի մեջ առնելով Անջատման—Անդարձության— Հայտնության— և Վերադարձի գեղագիտական— փիլիսոփայական արժեքները։

Վերադարձի զգացողությունները Տերյանի քնարական նվագներում միանգամից գտան պարզ ու անմիջական արտահայտչականություն։ Առարկայական աշխարհի գծային համաչափությունն ու գույների անսնթևեթ ներդաշնակությունը ձև են առնում հայոց միջնադարյան տաղերի ու հայրենների տաղաչափությամբ և իր թաքուն խոհերից, սրտի նվիրական զեղումներից, զգացմունքի բռնկումներից բանաստեղծը հյուսում է պոետական իր ներշնչանքների «Ոսկե շղթան».

Ծաղկել է նռից իմ այգին,
Սրտում իմ զարուն է արդեն,
Սիրում եմ այնպես քնքշագին,
Սիրում եմ, բայց ո՞ւմ—չգիտեմ...

Բնությունը արդեն տրամադրող է ու հմայիչ, հոգին ազատվում է կաշկանդումներից և զգացմունքները դառնում են մեղմ, նուրբ ու մտերմիկ։ Կյանքը հոլովում է իր ընթացքը, աշխարհը նորոգվում է խնդությամբ, մենության անուրջի անհույս երազներն ու ապարդյուն կարոտները տեղի են տալիս վայելքի, արբեցումի և մոռացության արթնացումներին, քնարական հիասքանչ էյուդներում տողանցելով հոգու բռնկումների հարատև արձագանքներ.

Արեգակը ծովն է իջնում,
Ցողը շողաց դալարին,
Սարի լանջից հովն է փչում,
Ատաղը շողաց կամարին:
Անճառելի վայելչությամբ
Իջավ տխուր իրիկուն,
Արևմուտքում մի ոսկի ամպ
Ցնորում է ու խոկում:
Իմ թախիծն էլ այն ամպի պես
Ցնորում է քնքշաբար,
Թոցավառվում ճիշելով քեզ
Եվ արտասվում քեզ համար:

Նոր են ոչ միայն տրամադրությունները, արտաքին աշխարհի գունային երանգները, այլև չափը, ռիթմը, սեմանտիկական կարգը։ Տերյանը հայտնաբերում է անհատի հոգևոր ինքնաստեղծման բազմաթիվ քանակներ, շարային միանվագությունը զուգորդելով ներքին օղակների սինխրոն ու բազմապլան ներհյուսումներով։ Գեղագիտական-փիլիսոփայական ամբողջություն ներկայացնող շարքերի հետ («Ոսկի շղթա», «Կատվի դրախտ», «Երկիր Նաիրի»), բանաստեղծական ժամանակագրությունը լրացվում է կենսագրական հատվածների քնարական ինքնաբավ արտազեղումներով («Տրիոլետներ Նվարդին», «Տրիոլետներ», «Իմ բալիկին», սիրային նամակ-խոստովանություններ, հեղափոխական երգեր և այլն), որոնք ընդլայնում են ժամանակաշրջանի հոգևոր ամբողջ փորձի գեղարվեստական ընկալումները։ Ժամանակի հոգևոր փորձի մեջ ուրույն նշանակություն ստացավ հեղափոխությունը, որ այս անգամ ար-

6 Նույն տեղում, էջ 111։

գնն հայտնվեց ոչ թե որպես հումանիտար-ուտոպիական ուսմունքներից հյուսված բարոյական ներհայեցողություն, այլ որպես գիտականորեն ըմբռնված սոցիալիզմ։ 1917 թվից Տերյանն արդեն Մոսկվայի և Պետերբուրգի մարքսիստ-հեղափոխականների շրջանում էր, թարգմանում է Վ. Ի. Լենինի «Պետություն և հեղափոխություն», «Կարլ Մարքս» աշխատությունները, գրում է «Նամակներ հայ գյուղացիներին ու բանվորներին», «Ինչ է ասում Լենինը գյուղացիներին» հրապարակախոսական հոդվածները, որոնց մեջ հիմնավորում է այն գաղափարը, թե «հայ աշխատավոր ժողովրդի փրկությունը Ռուսաստանի Բանվորական և Գյուղացիական Խորհուրդների իշխանության հզորության մեջ է», Ռուս սոցիալական ազատագրության տեսակետից ինչ անհրաժեշտություն ունեն «տնտեսության համայնական ձևերը»։ Սակայն հեղափոխության արժեքայնությունը Տերյանը գտավ ոչ միայն իբրև գրում կատարվող սոցիալական շարժում, այլ որպես հոգեկան վերածնության և կամքի ազատագրման խորհրդանիշ։ Այս իմաստով հեղափոխությունը իբրև ներզգացողություն արտացոլում է բանաստեղծի հոգու կենսագրության դիալեկտիկան, նրա հաղթանակը հին աշխարհի կապանքների հանդեպ («Որ կաշկանդել են մեր միտքն ու հոգին»), նրա հույզերի թարմացումը արթնացող արշալույսների բերկրանքից.

Իմ երկինքը հիմա բացված է,
Բացված է հուրերի ծով,
Իմ աչքերը հիմա լցված են,
Լցված են զվարթ ոսկով.
Կարկաչում են գարնան ջրերը,
Երգում են բարակ հովեր,
Արևոտ են գարնան օրերը,
Թևեր ինձ, ոսկի թևեր...

Ոմանք Տերյանի պոետական աշխարհը ենթարկում են իդիլլիկ, վերջավորված, միանշանակ սիստեմի, հարմարեցնելով այն «մթնշաղից-մրրկահավ» գծային համաչափությանը, որպես թե «կա միայն մի Տերյան», որ անվրեպ քայլել է արդեն հեռվում երևացող հեղափոխության արահետներով։ Իհարկե, այս մակերեսային հայացքը քիչ հարմարություն չի ստեղծում իրերի համահարթման համար, սակայն կանխում է երևույթներն իրենց բարդության մեջ հետազոտելու հնարավորությունը։ Իրականում Տերյանի միկրոաշխարհը միանգամայն բարդ կառուցվածք ունի, որը նրա ստեղծագործական անհատականությունը որոնումների, հրաժարումների, հեռացումների ու վերադարձի ուղիներում տրոհել է համարժեք երկվորյակների մի չափազանց հետաքրքիր փոխակերպումների։ Այստեղից ինքնին հետևում է մի այլ առանձնահատկություն։ Ինչպես բոլոր մեծ բանաստեղծները, Տերյանը ևս ուներ գեղարվեստական աշխարհի իր ներքին օրենքները, որոնք վերացարկվում են սոցիումի պատճառականությունից և ձեռք բերում ինքնուրույն ձևույթ։ Եվ ինչպիսի նոր, իրական արժեքներ էլ ներխուժեն այդ աշխարհը, որքան էլ այն հարստանա կյանքի հոգևոր փորձով, այնուամենայնիվ նրա նախակերտ օրենքների ներքին մնում է անդիմադրելի։ Բանաստեղծն արդեն չէր կարող հաշվի չնստել այդ ռեալությունների հետ, որովհետև դրանք իր ստեղծածն են, իր անցյալը, իր կենսաբանական էության հիշողությունը, իր կյանքի պատմության նյութական արժեքները։ Դրանով հենց պետք է բացատրել մթնշաղի ու անուրջի արձագանքները հեղափոխությամբ նորոգված նրա պոետական կենսագրության տևողության վրա.

Որքան դեռ տրտունջ, քանի տրտմություն
Պիտի օրորեն օրերս կրկին,
Մորմոքան դողան խոնջած իմ սրտում,
Զուլվեն դառնությամբ լեցուն իմ երգին...

Եվ որքան, որքան պիտի գա վրաց
Հոգիս, մաճու չափ թախիծ ու խոցում,
Քանիցս պիտի դողաս անփարատ
Երկու աշխարհի սահմանագծում...

Թախծի հավիտենական կախվածությունը վերստին վկայակոչում է իր սիմվոլ-ռեալությունները, երկրայինը թվում է տգեղ ու մեղսական և երևակայությունը որոնում է նրաշ աշխարհը, անցյալը թվում է անիմաստ («Ինչ մնաց ինձ-ոսկյա մի ցանց-ուրիշ ոչինչ»). «Թույն ու թախիծ» են բուրում հուշերը, ճակատագիրը գուշակում է «դեպի կորուստ», իսկ ապագան տանում է դեպի ահավոր անկում՝ «Օ՜, կրգան օրեր ավելի տրտում Ու դժնի, դժնի, առավել դժնի...»։

Եվ սակայն այն արժեքը, որ Տերյանի ներաշխարհի տոգորումներում մըշտապես մնաց որպես հավերժական գոյության անփոխարինելի մասունք, հայրենիքն էր։ Եթե ըստ բանաստեղծական շարքերի դիտենք նրա հոգևոր կենսագրության ստեղծումները Անջատումից մինչև Վերադարձ, ապա դժվար չի լինի նկատել, որ այն յուրովի անդրադարձնում է հայրենիքի գաղափարի ռեֆլեքսիան։ «Ես անջատված եմ հայրենի հողից, Հայրենի տունս իմ սրտին օտար». այսպես է տեղի ունենում Անջատումը «Մթնշաղի անուրջներում»։ «Դու չկաս արդեն, դարձել ես զրույց, Երազ ես դարձել— հայրենական տուն», այսպես է արձագանքում Անդարձությունը «Դիշեր և Հուշերում»։ «Դրոշմել ես բոցե կընիքը Մեռած իմ հոգում. Դու իմ հավատ, իմ հայրենիք, Դու իմ փրկություն», այսպես է կատարվում հայտնությունը «Ոսկի հեքիաթում»։ «Ու կարոտակեզ ահա կրկին Վերադառնում եմ, որ առհավետ Ունկնդիր լինեմ քո հին երգին...», այսպես է բացվում Վերադարձի արահետը «Երկիր Նաիրիում»։

Ինչպես հայտնի է XIX դարում հայրենիքի խորհրդանիշը Երկիր Նաիրին չէր, այլ Հայաստանը, որ կլասիցիզմի դրոշմով հայտնվեց որպես «Մայր—Հայաստանի» էմբլեմա և փոխանցվեց ազգային ռոմանտիզմին։ Այսպես վերհացավ, ֆիզիկական ու հոգևոր կերպարանք ստացավ XIX դարի ռոմանտիկական Հայաստանը։ Սակայն պատմական գալիք իրադարձությունները խորտակեցին ազգային ռոմանտիզմի պատրանքները և արդեն դարավերջին հայկական գաղափարաբանությունը ականատես եղավ ռոմանտիկական Հայաստանի փլուզմանը, իրողություն, որ էլեգիական իր ամբողջ խորությամբ արտահայտեց Թումանյանը 1902-ին գրած «Մեր նախորդներին» բանաստեղծության մեջ.

Երանի էր ձեզ, գովված երգիչներ,
Դուք երգում էիք վաղ առավոտյան,
Երբ որ երազներն ապրում էին դեռ,
Ոսկի երազներն հայի փրկության:

Ձեր բարդ երգերում կար մի հայրենիք
Խոխտ, վեհապանծ, թեպետև գերի,
Եվ ձեր քնարի ձայներն երջանիկ՝
Լիքը հրճվանքով գալոց օրերի:

Ախ, նա հոջոտվեց մեր աչքի առջև
Եվ մեր ըզգայուն սրտերն իրեն հետ,
Ոսկի երազներ՝ միրաժի նման՝
Մեր անապատում չքացան անհետ:

Ռոմանտիկական Հայաստանի այս փլատակներում է, որ Տերյանը հայտնաբերեց առասպելական Երկիր Նաիրին և նրա մասունքներից հյուսեց «բարձր տառապանքի» բանաստեղծական մատյանը՝ ինքնատիպ ու գեղեցիկ ոչ միայն իբրև գաղափար, այլև հոյակապ ու անզուգական որպես պոետական հղացում։ «Վերջ ի վերջո ես սկսում եմ գալ այն եզրակացության, որ մեր հայրենիքի ցավը մեզ այնպես է մաշում, ջլատում, կեղեքում, որ մենք դառնում ենք անընդու-

նակ ուրիշ բան հասկանալու կամ անելու։ Դա մի հիվանդագին սեր է, դա մի անհաղթելի մոլություն է—դրա պրիզմայով է բացվում մեր առջև աշխարհը, այդ չափով ենք մոտենում մենք ամեն ինչի և գուցե դրա համար անզոր ենք դառնում և մեռնում ենք վաղ...»[7]։ Երևույթների անձնականացման սիմվոլիստական հայացքը կա Տերյանի այս խոսքերում, որ արդեն հուշում է «Երկիր Նաիրի» շարքի գեղագիտական մեկնակետը։ Ռոմանտիզմի պոեզիայում հայրենիք և սուբյեկտ հասկացությունները գեղարվեստական պատկերի կառուցվածքում տակավին պահպանում են որոշ հարաբերական կախում։ Որքան էլ ռոմանտիկները հայրենիքի գաղափարը գլխից փոխադրեցին սրտի մեջ, այնուամենայնիվ այստեղ նա հանդես է գալիս որպես բովանդակության տարր։ Տերյանի հայրենիքը սուբյեկտի զգացողությունների լինելիությունն է և այս իմաստով այն ոչ թե բովանդակության տարր է, այլ ներքին ձևի հատկանիշ։ «Եվ չեմ ազատվի դրանցից երևի մինչև վերջ,— գրում է բանաստեղծը Նվարդ Թումանյանին,— ինչպե՞ս ազատվես ինքդ քեզնից... Դուք երեակայել չեք կարող, թե ինչպես է անցնում իմ կյանքը. ոչ թե անցնում է, այլ այրվում մի ներքին դառն կրակով, և ես անզոր եմ այդ կրակի դեմ և անօգնական։ Եվ ես երբեմն մտածում եմ, որ դա ուներ իր խորին և վսեմ իմաստը։ Չէ՞ որ այդպես, իմ հոգու նման այրվում է իմ երկիրը. «իմ Նաիրին»— գուցե դրա համար է այրվում և իմ հոգին, որովհետև իմ հոգու մեջ «Նաիրյան չքնաղ հոգին» է այրվում»[8]։ Երևույթի «խոր և վսեմ իմաստը» հենց հայրենիք և սուբյեկտ ռեալությունների ներհյուսումն է, սրտի և գաղափարի ձուլումը, որը բանաստեղծական պատկերներին տալիս է երկպլան կառուցվածք, ուր հայրենիքը՝ արտաքին աշխարհի առարկայությունը, հանդես է գալիս որպես զգացմունքի խորհրդանիշ։

Մեկնաբանելով հայրենիքի պոետական սիմվոլը, Տերյանը նկատում է, որ «Նաիրի պետք է հասկանալ ոչ թե՛ պատմական, այլ իդեական իմաստով»։ Պատմականի և իդեականի այս տարբերակումը որոշակի իմաստ ունի և համընկնում է նյութական ու հոգևոր Հայաստան հասկացություններին։ «Իդեական» Նաիրին ըստ էության «հոգևոր Հայաստանի» բանաստեղծական խորհրդանիշն է, իսկ «հոգևոր Հայաստանը»՝ «Երկիր Նաիրի» պատմա-փիլիսոփայական կոնցեպցիան։ Ըստ այդ կոնցեպցիայի Տերյանը ապահերոսականացնում է ավանդական հայրենիքը, պատմության պեյզաժից օտարելով կլասիցիզմի և ազգային ռոմանտիզմի ստեղծած միֆերը՝ Արամ, Հայկ, Տիգրան, Արշակ, Վարդան, Ավարայր և այլն և հայտնաբերում հոգևոր մեծությամբ ձուլված իր միֆը՝ Երկիր Նաիրին՝ հեզությամբ, լուռ զոհաբերության և երկնային աղոթքի գեղեցկությամբ՝ «Ինչպե՞ս չըսիրեմ հեզությամբ լցված Դու յոթնապատիկ խոցված Տիրամայր»։ Էթնիկական կանչի հազարամյա հեռավորությունից կարծես լսվում է «մեղմ երգի», «զանգերի զրզանչի» տխուր մեղեդին և տեսիլքի պես հառնում է քնարական հայրենիքը՝ խորհրդավոր, ինքնաբավ ու անմեկնելի՝ «Մշուշի միջից,— տեսիլ դյութական,— Բացվում է կրկին Նաիրին տրտում»։ Վերհուշերի էկզոտիկ հեռվում հայրենի եզերքը ձուլվում է իրիկնամուտի մուժին, «թախծում են արոտ ու հերկ», «երգում է զանգը լալկան» և արևի վերջին շողերով ջերմանում է «մեղմ ու հիվանդ բարի մի մայր»։ Իրականը հայտնվում է պատրանքի մեջ՝ «Կարծես թե դարձել եմ ես տուն», և անցած օրերի հեքիաթները վերստին կառուցում են մանկության երազների հրաշքը.

Նորից ես մանուկ եմ այսօր,
Դրախտ է նորից իմ հոգում,
Արևը ճանչչում է հեռվում,
Դեռից բարձրանում է մշուշ,
Հեքիաթը անվերջ օրորում,
Իլիկը խոսում է անուշ...

---

7 Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1979, էջ 360։

Եղեռնի արհավիրքները տղբերգական ծանր զգացողություններով տոգորեցին բանաստեղծի ներաշխարհը։ Երկիր Նաիրի էկզոտիկ հեռապատկերը մթագնվում է կոտորածի ու արյան սարսափներով՝ կլինի՞ արդյոք նաիրցին, կհնչի՞ արդյոք նաիրականը և մահվան տեսիլները հալածում են բանաստեղծի պատրանքները կործանման երկյուղի շարագուշակ տագնապներով՝ «Մի՞թե ես պիտի երգեմ քեզ օրոր Եվ արքայական դնեմ գերեզման»։ Սակայն «հոգևոր հայրենիքի» ուտոպիան ապագայի մեջ ուրվագծում է անկիզելի Փյունիկը՝ Երկիր Նաիրին և ոգի առած Լույս-Անցորդ-առաքյալը, շրջում է ավերված հայրենիքի արահետներով՝ ավետելու հարության առավոտը.

Ուխտավոր անցուլ, դարերի ժառանգ
Մի նեղ նաիրցի գնում եմ անկանգ,—
Թող զուլական գիշերն անասասա դավն—
Որման մութը սև՝ այնման ես համառ,
Երկիր, իմ երկիր, հավատով անմար,
Սուրբ է քո ուղին և պսակդ վեհ...

«Երկիր Նաիրի» շարքը հայ պոեզիայի անկրկնելի էջերից է։ Տերյանը փոխաձևեց հայրենիքի ֆիզիկական ու հոգևոր պեյզաժի էսթետիկական համարժեքները և հայրենասիրական պոեզիան բարձրացրեց որակական նոր աստիճանի։

Բնորոշելով Տերյանի գրական-պատմական դերը, Ավ. Իսահակյանը նկատում է, թե «Վահանի երևումով մեր քնարերգության մեջ մի նոր էջ բացվեց, նոր մեկնակետ՝ սիմվոլիզմը», իսկ Հ. Թումանյանը, միայն իրեն յուրահատուկ իմաստությամբ բնութագրելով, թե «սիմվոլիստները ձգտում են ստեղծել իրենց հեքիաթը» և միանգամայն աներկմիտ ընկալելով Տերյանի պոեզիայի ազգային ոգին, հաստատում է, թե «նրա թախիծն ու երազները, մշուշն ու աղջամուղջը խորթ չեն մեր երկրին ու մեր հոգուն». «Ես եղել եմ էն երկնքին մոտիկ լեռնադաշտում, ուր ծնվել է Տերյանը, և կարծես թե նա լիքն է էն մշուշային թախիծով ու քնքույշ երազներով, որ բնորոշում են մեր տադանդավոր բանաստեղծի քնարը։ Վերջապես թախիծն ու երազը խորթ չեն հայի հոգուն, և մենք շատ երազկոտ ժողովուրդ ենք»[8]։ Յուրացնելով համաշխարհային պոեզիայի զարգացման պատմության մեջ «մի ամբողջ հեղափոխություն» նշանավորած գրական դպրոցի գեղագիտական սկզբունքները, Տերյանը, հիրավի, նոր մակարդակի բարձրացրեց հայ բանաստեղծությունը, նրա առաջընթացը մերձեցնելով համաշխարհային պոեզիայի չափանիշներին։ Նորը ամենից առաջ այն էր, որ արտաքին աշխարհի պատկերը անց է կացվում քնարական անհատի հոգու և մարմնի, նրա զգայությունների միջով, ըստ այդմ բանաստեղծական պատկերին տալիս լրացուցիչ չափում՝ օբյեկտի և սուբյեկտի հարաբերության հիմքի վրա։ Այստեղ իսկ պատկերային կառուցվածքը գծագրվում է երկպլան ընթացքով, ուր արտաքին, էմպիրիկ աշխարհը առաջին պլանի վրա ներկայանում է որպես իրերի ետևում թաքնված ինչ-որ բանի սիմվոլ, այսինքն նեղքին աշխարհի՝ մարդկային հոգու սիմվոլ.

Դալուկ դաշտեր, մերկ անտառ...
—Մանացողի տրխուր կյանք,
Անձրև, քամի, սև կամար...
—Սրտակառուր ճեկեկանք։

Տերյանը փոխակերպեց հայ պոեզիայի սեմանտիկական կարգը, ստեղծելով երևույթների իռացիոնալ, խորհրդավոր էությունն արտահայտող, բանաստեղծական մտքի շարժման առկախությունը, ակնարկությունը, այլաբանությունը բնորոշող բազմանշանակ և բանականորեն անվերծանելի խոսքի պոե-

---

8 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1951, էջ 453։

տիկա, հանգամանք, որ ուղեկցվեց բանաստեղծության հնչյունային կազմության և պոետական բառարանի միանգամայն նոր հայտնություններով։ Միայն «Մթնշաղի անուրջներում» կարելի է առանձնացնել մի ամբողջ շարք բառեր, որոնք անհայտ էին XIX դարի բանաստեղծությանը՝ անկարեկից, վարսաթափ, նրբահյուս, հեռածավալ, գեղագանգուր, երկնահուպ, տխրադալուկ, օձանման, ստվերապաճույճ, արծաթաճոճ, քնքշաբույր, ինքնահիացում և այլն։ Իրերի ու երևույթների մեջ հայտնաբերելով իմաստային նոր ընկալումներ, Տերյանը հատկանիշ-վերադիրները փոխաձևեց ասոցիատիվ վերադիրով, առարկայի փիզիկական հատկանիշի փոխարեն ճանաչելով զգայական-հոգեբանական հատկանիշը՝ անկաղեկից տանջանք, վհատության հեկեկանք, կապույտ մեգ, արծաթ հոսք, լույս հնչյուն, հեռածավալ անհայտ, գեղագանգուր երազ, անտրտուջ նինջ, հիվանդ կարոտ, տրտմության ժանյակ, սառած հեկեկանք, լոսկ անրջանք, հրդեհավառ խորություն և այլն։

Որպես մտածող և գեղագետ՝ Տերյանը մշտապես մտահոգ էր հայ գրականության հեռանկարների որոնումով։ Այս տեսակետից հատկապես բնորոշ է «Հայ գրականության գալիք օրը» դասախոսությունը (1914), ուր նա առաջադրում է ազգային մշակույթի նորոգության մի ամբողջական ծրագիր։ Արմատական նորոգության այն կոչը, որ աղդարարում էր Տերյանը, իր հիմքում ուներ պատմական շրջադարձի հոգեբանական անդրադարձը՝ «1905 թվի մակընթացությունն ու դրան հետևող տարիների ավերիչ ու հոգեսպան տեղատվությունը»։ Ի՞նչ էինք մենք եղել և ի՞նչ ենք այսօր հարցականները ճակատագրական սրությամբ գրվում են հայ իրականության առաջ՝ կամ համաքայլ ընթանալ ժամանակի հետ, կամ կուլ գնալ դաժան մրցակցությանը։ «Եվ հիրավի տը մենք կանգնած ենք խոշոր, գուցե ճակատագրական գալիքի առջև», ասում է Տերյանը, մթնոլորտից կախելով տագնապալից հարցը՝ «Արդյո՞ք սա մի կուլտուրական պատմաշրջանի վերջն է, թե՞ մի ամբողջ կուլտուրայի»[9]։

Այս դիտակետից էր, ահա, Տերյանը առաջադրում «արժեքների վերագնահատության» իր դրույթը։ Վերլուծելով XIX դարի հայ հասարակական մտքի բովանդակությունը, նա նկատում է, որ առաջամղիչ ուժը եղել է «ազգային գոյության, ազգային անկախության գաղափարը», որ հայրենիքի երգը հնչել է Եղիշեից ու Խորենացուց մինչև մեր օրերը, դարեր շարունակ գունավորել մտավորականության «միտքն ու երևակայությունը», մղել նրանց «հերոսական մարտիրոսության, դեպի անեղևակայելի լարումն հոգեկան ու նյութավոր էներգիայի»։ Մեր ամբողջ կյանքի այս «հիվանդագին բնույթն» անշուշտ արդարացնում է գրականության իշխող ուղղությունը, սակայն ժամանակները միանգամայն նոր նշանաբան են առաջադրել ազգերի ապագա գոյության, որն ինքնին սուր կետի վրա է դնում հին ու նորի մաքառումը. «Ուրեմն մեր գրականությունը և հասարակական միտքը կատարել է մի շրջանառություն և այսօր կրիզիսի ժամն ենք ապրում մենք։ Այն ժամը, երբ հինը դեռ չի անցել, բայց նորն էլ հաստատ ու ամուր չէ կանգնած ոտքերի վրա»[10]։ Մերժելով «ազգային ուտիլիտարիզմն» ու ինքնագոհ «սեմինարիզմը», Տերյանը պահանջում էր հրաժարվել հին կաղապարներից և որոնել սեփական, անհատական ոճ, քանզի «անկանգ առաջադիմությունը կյանքի և կուլտուրայի ստեղծում է նոր ստիլ, որ հանդիսանում է մի տեսակ էպոխայի արտահայտությունը, նրա հոգու գեղարվեստական պատկերը»։ Սոցիալական ու քաղաքական հեղաբեկումները արմատական տեղաշարժեր են գուշակում մարդկության պատմության ընթացքում, ազգերը ներհյուսվում են կյանքի համաշխարհային շարժման մեջ՝ փոխակերպելով մեծ ու փոքր ազգերի հարաբերական կախումը, տեղի է ունենում «կուլտուրաների մի եղբայրական մերձեցում», ուր ազգային գոյությունն ու ինքնությունը ստուգվելու են հոգևոր արժեքների համամարդկային

9 Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 238։

10 Նույն տեղում, էջ 248։

ավանդի մեջ։ Ուստի, ասում է Տերյանը, «մեր մոտավոր նպատակն է կուլտուրական մի ժողովուրդ լինել, այսինքն զարգացնել մեր ստեղծագործ ուժերը, այլ խոսքով, արտահայտել մեզ կյանքում, այսինքն մտնել կուլտուրական մարդկության գերդաստանը ոչ իբրև խորթ զավակ, կամ ծույլ ու խավար մի ստրուկ, ձուլել մեր կյանքը համամարդկային կյանքի հոսանքին, պահպանելով մեր հոգեկան առանձնահատուկ գծերն ու գույները։ Այլ խոսքով՝ ունենալ մեր ինքնատիպ կուլտուրան, մեր ստեղծագործական բաժինը հանուր մարդկային ստեղծագործության մեջ»[11]։

11 Նույն տեղում, էջ 275—276։